

ՀԱՅ ՏԵՂԵԿԱՏՈՒ ԲԻՒՐՕ. — 30
Rue Yacob, PARIS (VI).

ՄԻՈՒԹԻԻՆ. — Որկան Հայկ. Բա-
րեզ. ընդհ. Միութեան: — Երկամսեայ,
— Բաժնեգին տարեկան՝ 6 ֆր.: — Rue
Madabegh, CAIRE (Egypte):

ՅՈՐՍԱՐԵՐ. — Կը հրատարակուի Գը.
Եշ. և Շարաթ՝ Իրիկունները: Դ. տարի,
Դահրէ, Բաժ. տարեկան՝ 30 ֆր. Réd.
«Houssaper» — B. P. 868, Le
CAIRE.

ՆՈՐ ԿԵԱՆՔ. — Ազգային, քաղաքա-
կան, գրական, և բարոյական շարաթա-
թերթ: Բաժնեգին տարեկան 10 ֆր.: The
Citizen Publishing Co. 31 Repu-
blican Building, FRESNO, Cal.

ՍԻՍՈՒԱՆ. — (1918 շարաթաթերթ)
Տարեկան բաժնիգին՝ 15 ֆր. — The
«Sisuan» Armenia Weekly. P. O.
Box 927, FRESNO. Cal. (U.S.A.):

ՎԵՐԱՃՆՈՒՆԴ. — Կիսամսեայ հան-
դէս. — Տարեկան բաժնեգին՝ 20 ֆր. —
Dr. Léon Hambarzumian, 16, Bou-
levard St. Denis PARIS

ՎԵՐԱՃՆՈՒԹԻՒՆ. — Ամսաթերթ. Բ.
տարի, Հասարակական, գրական և գի-
տական: Բաժնեգին տարեկան 15 ֆր.: —
202 P. O. Box, Sta. A. BOSTON,
MASS, (U. S. A.):
Ամերիկա, ՏԱՐԻՈՍ. (Գիտել...)

ՓԻԼԻՆԻ. — Գրական, գեղարուեստա-
կան ամսաթերթ. Բ. տարի: — Բաժ-
նեգին տարեկան՝ 30 ֆր.: P. O. Box
2645, BOSTON, MASS.

ARARAT. — A searchlight on
Armenia. Vol. V. London. Annual
Subscription 10 Shilings.

ARMENIA. — Eco delle riven-
dicazioni armene. Rivista mensile
illustrata. An. II, TORINO (Italia).

ՆՈՐ ՍՏԱՅՈՒԱԾ ԳՐԳԵՐ

Ս. Սապահ-Գիւլեան. — ՓՈՔՐ-ՀՈՏԻՒ ՑԻ-
ՀԱՏԱԿՆԵՐ. Մասն Բ. հտ. Բ. Տպարան Երի-
տասարդ Հայաստանի, Զիկագո, 1917 Յունիս.
էջ 350, տր. 2:

ՔՍԱՆ ԿԱՌԱՎԱՐՆԵՐ. Դուր 1915 Յունիս
15ին Կ. Պոլսոյ մէջ կախազան բարձրացող քսան
Ս. Դ. Ննչակեան ընկերներու յիշատակին. Տը-
պարան Երիտասարդ Հայաստանի, Փրազիւէնս,
1916. էջ 176. տէղ 40:

Dr. Z. Chérédjian. — LES TURCS ET
LA QUESTION D'ARMÉNIE. — Genève,
Soc. Gén. d'Imprimerie 18. էջ 45. ֆր. 0.50:

K. D'Any. — LA FIN DE LA POLITI-
QUE DE MASSACRE ET L'HEURE DU
CHATIMENT. — Lausanne, 1919. էջ 8. (Ne
se vend pas):

K. D'Any. — L'EXTERMINATION DES
CHRETIENS EN TURQUIE. Lausanne,
Imprimerie la Concorde, 1918, էջ 29, ֆր.
0.50:

Prof. V. Totomianz. — ARMENIA ECO-
NOMICA, con prefazione di L. Luzzatti. Ro-
ma, Tip. Tiber, piazza Pilota, 11, - 1919, էջ
86, ֆր. 2:

A.-F. Frangulis. — L'Arménie devant la
Conférence de la Paix. Ի Թերթին Le monde
nouveau diplomatique et économique, 1919
թիւ 9. մարտ 13. Paris, 3 Rue Etienne-Jo-
delle

Wartan Mahokian. — LA PLAINTÉ DE
L'ARMÉNIE pour violon avec accompane-
ment de Piano ou Orchestre. Nice, M. Mail-
lot, éditeur.

22 փետր. 1919

Վսեմաշուք Տէր

Պատիւ ունինք Ձեզ հաղորդելու թէ՛ ի նկատի առնելով Հայաստանի բնակչութեան վերահաս տատանան կենսական կարևորութիւնը և ազատ ու անկախ Հայաստանի կազմութեան առթիւ, հայրենիք վերադառնալ ամէն հայու համար սրբազան պարտականութիւն մ'ըլլալը, Լահէյի մէջ, առ ժամեայ մասնախումբի մը ձեռնբռնել, ցուցեամբ, հիմնած ենք Գրասենեակ մը «Bureau Arménien de Volontariat & de Rapatriement» անուն տակ, որ պիտի գործէ Հոլանտայի մէջ գոյութիւն ունեցող ուրիշ հայ կազմակերպութիւններէ անջատ և անկախ կերպով:

Հոլանտայի մէջ գտնուող հայերու մեծամասնութիւնը մեր մասնախումբին յարած է ամէնքը գրաւոր կերպով և երզմամբ խոստացած են Հայաստանի վերակազմութեան գործին մասնակցելու և օգնելու նպատակով, հոն գրկուելիք խումբերուն միանալ:

Մեր Գրասենեակին գլխաւոր գործը պիտի ըլլայ բրոքակնտ ընել, որպէս զի աշխարհի աւելի կողմը Հայ շրջանակներու մէջ նմաօրինակ Գրասենեակներ կազմուին: Հայ լրագրութեան միջոցաւ սրտառուէ կոչեր պիտի ուղղենք ժողովրդեան, ի վեր հանելով այս տեսակ կազմակերպութիւններու կարևոր պէտքը:

Բրոքակնտի բոլոր ծախքերն ապահովուելու համար, մասնախումբս կարևոր գումար մ'ունի իր. տրամադրութեան տակ և պիտի հոգայ նաև Հոլանտայէն Հայաստան վերադարձողներու ճամբու ծախքը:

Մեր բոլոր ջանքերուն նպատակակէտը պիտի ըլլայ, ի պատճառ ժամու, Ազգային պատուիրակութեանդ տրամադրութեան տակ զնել պատրաստակամ և անձնաւուէր Հայերու կարևոր թիւ մը, որ յանձն առնեն միանալ թէ վարչային և թէ զինուորական նպատակներով Հայաստան գրկուելիք խումբերուն:

Այս կերպով կը կարծենք մասնակցած ըլլալ մեր Ազգային մեծ երազին իրականացման գործին, այսինքն մեծ և անկախ Հայաստանի կազմութեան, զերծ բոլոր այն տեսակ օտար խնամակալութիւններէ, որոնք կրնան ապագային ֆաստակար դառնալ մեր Ազգային ինքնիշխանութեան և անկախութեան:

Որպէս զի մեր ջանքերը յաջողութեամբ պսակուին և կարենանք օգտակարապէս ի գլուխ

հանել այն գործը, որուն նախաձեռնութիւնն ստանձնելու համարձակութիւնն ունեցած ենք, կը յուսանք որ Ձեր Վսեմութիւնը պիտի հաճի մեզ շնորհել իր բարձր հաւանութիւնը և աջակցութիւնը:

Կը յուսանք նաև հաստատապէս որ մեր ծրագրին իրականացումը պիտի ծառայէ նոյնպէս չեզոքացնելու ինչ ինչ շրջանակներու մէջ յարուցուած այն առարկութիւնը թէ Հայերը փոքրամասնութիւն կը կազմեն Հայաստանի մէջ:

Հաճեցէք ընդունիլ, Տէր Նախագահ, մեր և յախտագիտական ամենաշնորհ գագադմներուն հետ նաև մեր ամենախորին յարգանաց հաւատարմութիւնը:

Ատենադպիր Ատենապետ
Եր. Պազիրկեան Դ. Մարեան

Ի պատասխանի մեր Նորին Վսեմ. Պոզոս Բաշա Նուպարի ուղղած 22 փետր. թուակիր նամակին, զոր Ձեզ հաղորդած ենք իր ժամանակին, մեր Գրասենեակը հետեւալ պատասխանը տացած է, որ նոյնութեամբ կ'ընդօրինակենք ստորև:

Անշուշտ մեր ընթերցողները համակարծիք պիտի ըլլան թէ ինչպէս Նորին Վսեմութիւնն ալ բարեհաճութիւնն ունեցած է անուանելու մեր կազմակերպութիւնը ամենակարեւոր Ազգ. հաս. տատուութիւն մը, որ կոչուած է մեծ ծառայութիւն մատուցանելու մեր դատին:

Կը յուսանք որ մեր ծրագրին պաշտօնապէս Ազգ. Պատուիրակութեան հաւանութեան առ ժանացած ըլլալը լաւագոյն քաշլեքութիւնը պիտի ըլլայ բոլոր Հայ կեդրոններու մէջ նոյն օրինակ Գրասենեակներ կազմելու:

Բաքիզ 11 Մարտ 1919

Տէր Նախագահ

«Ստացայ Ձեր նամակը, որով կ'իմացնէիք թէ տեղւոյդ մէջ արդէն գոյութիւն ունեցող կազմակերպութիւններէ անջատ Գրասենեակ մը կազմուած է «Bureau Arménien de Volontariat et de Rapatriement» անուն տակ և աւելոր ծրագրին յարած են տեղւոյդ զաղութիւն մեծամասնութիւնը:

«Հաւատարմութիւն» այս նոր հաստատութիւնը կոչուած է մեծ ծառայութիւններ մատուցանել մեր դատին Ազգ. Պատուիրակութիւնս համամիտ ըլլալով Ձեր նախաձեռնութեան և Ձեր առաջգրած ծրագրին կ'ապահովէ Ձեզ իր աջակցութիւնը և ջերմապէս կը շնորհաւորէ Ձեզ, Հաճեցէք ընդունել ծեր նախագահի մը յարգանաց հաւատարմութիւնը:

Ստորագրուած

ՊՅՈՒՍ ՆՈՒԿԱՐ